11030385

ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳԻՏԱԿԱՆ

1872 ՏԱՐԻՆ

Հազար ութ հարիւր եօթանասուն երկու տարին կը համարուի անոնցմէ որ ոչ կեղտ և ոչ գովեստ ժառանգեցին։

Խոհականութեամբ ազատութիւն սիրող կուսակցութիւնն երասանակն ամուր բռնեց, և ոչ մատնաչափ ետ նահանջեցաւ, և եթէ դանդաղաքայլ՝ այլ միշտ դէպ 'ի նպատակն յառաջեց։

Ամենայն տէրութիւնք վերանորոգութեանց ձեռք զարկին, թէպէտ երկչոտութեամբ, գաղջութեամբ, մոռատանջութեամբ. և այսչափս իսկ բաւական եղաւ չփոթութիւն ու տագնապ՝ բայց ոչ դեռ վհատութիւն պատճառելու խառնազգայնոց (Internazionale) և ուրիշ յուսահատ կուսակցութեանց։

Եւրոպա ծարաւի է խաղաղութեան, և զայն պղտորող խնդիրք դեռ ժամանակի կարօտ են. փառասէր և անհանդարտ ազգք անկարող են. պաշտպանողական դաշնաւորութիւնք՝ ամրակնքեալ չեն, իսկ ՁԼատողականք և ոչ իսկ ստուերագրեալ։ Ամենայն ազգք զինեալ են և կը զինին, կասկածելով հեռաւորէն ու մերձաւորէն—առ խոհեմութեան — պատճառելով անտանելի ծանրութիւն հարկաց։

Խնայողութեան զարգացումն ամենուրեք զգալի եղաւ, թէ և գործաւորաց դապք անգործութեան տարափոխիկ ախտէն բռնուեցան, և Եւրոպիոյ երեքին երկու և աւելի մասին մէջ հունձք անյաջող գնացին։

Ռամիկ դասուց վիճակը բարելաւցաւ ամենուրեք, թէպէտ և ռոճկաց աւելնալն և աշխատութեան ժամուց նուազումը չհաւասարակշռեցաւ կենաց առաջնակարգ պիտոյից գիներուն առ հասարակ բարձրանալուն հետ։

Մտաւորական զարգացումն համեմատական չեղաւ նիւթական զարգացման, թերևս քաղաքական անհանգըստութեան մտքերը զբաղեցնելուն և ընդարմացնելուն համար։ Թէպէտ և մաղձախտն երևցաւ Եւրոպիոյ մէջ՝ 'ի Ռուսիա և յՈՒնգարիա, այլ առողջութեան վիճակն ընդհանուր աղէկ անցաւ — 'ի բաց առեալ ՁՀռովմ և ՁՊեռլին։ Անգղիա ալ յառողջութեան մասին շատ աւելի վրայ դրաւ։ Ամեն տեղ ժողովուրդք աճելու վրայ են։

Անգղիա առաջին եղաւ և գերագոյն 'ի գործունէութեան. 1872 տարին սկըսաւ Միացեալ Թագաւորութեան մէջ մեծ սիրոյ ցոյցով առ միապետութիւնն — գոհարանութեամբ՝ Կալէսի իշխանին Թագաւորութեան ժառանգին՝ ապաքինելուն համար. յետոյ վարչական մթնոլորտը մթագնեցաւ այն հռչակաւոր Ալապամայի խնդրով, որ է Ամերիկոյ Միաբանեալ–Նահանգաց հիւսիսային մասին բողոքելը՝ Անգղիոյ նաւարաններուն մէջ շինուած պատերազմիկ նաւուց համար՝ 'ի հաշիւ և 'ի նըպաստ հարաւայնոց Միաբան–Նահանգաց։ Լորտ Կրանվիլի մեծանձնութեամբ՝ համբերութեամբ և հանդարտ հաստատամտութեամբ վտանգն անցաւ, և Միաբանեալ–Նահանգաց և Անգղիոյ երկայն տարաձայնութիւնը վերջապէս լուծաւ կրկին օտարազգի դատաւորութեամբ (Ճինեւռա և Գերմանիոյ կայսրն) երկուքն ալ հակառակորդք Անգղիոյ, որք զանազան ազգաց աշխարհագէտներէ յանձնաժողով մը կազմեցին, և ըստ որոշման նորա Անգղիա

Քանատայէն սահմանագլուխ երկրի մաս մը կորնցուց 'ի Սէն—Ժիւան, և Նոր–երկրի Ձրկնաստանեայց վրայ ունեցած իրաւունքն, ուր հիմա և այլ ազգք կրնան որսի երթալ, և ետ կեցաւ Ամերիկոյ երկրէն Քանատայի վրայ ասպատակող Ֆէնիաններուն ջնասուն պահանջքն ուզելէն։ — Ամերիկոյ և Անգղիոյ մէջ բարեկամութեան և ազգականութեան զգայմունքն ոչ երբեք աւելի սիրալիր եղած է. իսկ օտարազգի դատաւորութեան դրութիւնը չեղաւ համազգային իրաւանց կանոն. այլ Անգղիոյ տուած չափաւորութեան օրինակն անբեղուն պիտի չմնայ, գոնեա 'ի գլխաւորումն ընդ մէջ զանազան ժողովրդոց եղած փոքրիկ խնդրոց։

Ուրիշ վերանորոգութիւնք ալ եղան Անգղիոյ մէջ եթէ հասարակաց դաստիարակութեան ոճոյն նկատմամբ, և եթէ ըստ քաղաքային քաջողջութեան խնամոց և ըստ դրութեան ընտրութեանց. և ոստիկանութեան կողմանէ ոգելից ըմպելեաց վաճառման նկատմամբ. նաև բարեկարգութեամբ բանակի և պատերազմական նաւ շինելու գործունէութեամբ, ջանալով կազմել 50էն 70 զոնէլլաղ ծանրութեամբ հրանօթ կրելու կարող նաւեր, որոնք վեց մղոն հեռաւորութենէ 1000 — 1200 հաղարակրամ կշռող գնտակով 28 — 30 բթաչափ թանձրութիւն ծակեն. — վերջին չափ թանձրութեան զրահապատ նաւուց որ կարող ըլլան դեռ նաւարկել։

Իռլանտիոյ ալ զիջողութիւններ ըրաւ Անգղիա, ուր ոգիք միշտ հակառակորդ են իրեն՝ յախուռն բերմամբ ինքնիշխանութեան, և ուղղափառութեան վառ նախանձու։

Գաղղիոյ հետ դաշինք հաստատուեցաւ վաճառականութեան, իբրև եղանակ կեանց (modus vivendi), Թիէրի պայմանած պահպանադրութեամբը[1] (sistema protezionista), որով Թէպէտ Անգղիա ունի նեհ (tariffa) կտրելու ազատութիւն՝ Գաղղիա ապրանք մտուցած ժամանակ, այլ Գաղղիա ալ իրաւունք ունի մաքսի տակ ձգելու անգղիական քանի մը վաճառք. սակայն դաշնադրութիւնն հաստատուն չէ, և թերևս 'ի հիմանց բարեկերպի։ Դորի նախանձայոյզ կուսակցութիւնն հանդարտ է. Տիզրաէլի և Տէրպի չեն փութացներ կլատսդընի պաշտօնակալութեան անկումը, որ թէպէտ հաստատուն չէ՝ այլ վտանգի մէջ ալ չէ։

Ընդ մէջ Անգղիոյ և Աւստրալիոյ ելեկտրաշարժ հեռագրաթելն սկըսաւ բանիլ — 14,000 մղոն ներքնածովային պարան։—Բարեյուսոյ սարին հիւսիս—արևմտակողմ սահմանածայրին վրայ՝ Պազուդոյ–Լանտ նոր գաղթականութիւն մ'եղաւ Անգղիոյ, մինչդեռ հին գաղթականութեանց ինքնիշխանութիւն տալու ստիպման մէջ է՝ այն կէտին հասած ըլլալնուն. ինչպէս Բարեյուսոյ սարին շնորհեց ինքնիշխան վարչութիւն տարույս ընթացքին մէջ։

Հնդկաստանի փոխարքային Լորտ Մայո՝ սպանաւ մոլեռանդն մէկէ մը, և նոր փոխարքային Լորտ Նորթպրուք նախորդին ընթացքը շարունակել կ'երևցընէ հասարակաց գործոց և ընչից զարգացման համար. և մինչև կ'ըսուի թէ Հնդիկ տեղացիք երկրին քաղաքական վարչութեանը մասնակից պիտի ըլլան։

Խորհրդարանը յայտնեց 200 մեծամասն քուէիւք ընդդէմ Միեելի շարժման՝ թէ իւր միտքը չէր բաժնել զեկեղեցի Տէրութենէն. ատեանք վաւերացուցին թէ բարիք՝ որք են աստենակալք՝ իրաւունք չունին քուէի յընտրութեան խորհրդարանի անդամոց։

Դաւադրութիւն մ'եղաւ ընդդէմ կենաց թագուհւոյն, իբրև սպառնալիք ա-

1 Որով ազգի մը վաճառք օտար երկիր չեն կրնար մտնել՝ բայց եթէ նոյն երկրին նորամուտ վաճառուց համար կտրած գնոյն համեմատ. և այս պահպանադրութիւնս կը հաստատեն ազգք ներքին ճարտարագործութիւնն ու ընչեղութիւնը զարգացնելու համար. բայց այս բանիս համար նախնական և անգործ ապրանք շատ ունենալու է. ապա թէ ոչ շատ չանցնիր այլոց պահանջած գնոյն հարկ կ'ըլլայ խոնարհիլ, ինչպէս որ եղաւ Գաղղիոյ, ու Թիէրի բացարձակ առաջարկութեան գործադրութիւնն յանկարելութեան է։

Լելի քան դիտաւորութիւն սպանման, և իրլանտացին O' Քոէնները ցնորամիտ ու չարագործ պատանին ծեծի ու մէկ տարուան բանդի դատապարտուեցաւ։ Ելումուտք յաջողութեան մէջ են. առաջին ինն ամսուան մէջ քանի մը հարկաց ամբողջապէս կամ մասնաբար վերցուելովն հանդերձ, գրեթէ հինգ միլիոն ու կէս սդեռլին աւելցած է, բայց դըժբաղդաբար մեծաւ մասամբ ոգելից ըմպելեաց տրովք. արբշռութիւնը սոսկալի կը շատնայ՝ ռոճկաց աւելնալուն և աշխատութեան ժամերուն քիչնալուն պատճառաւ. սակայն եղերունք նուազած են 30 առ հարիւր։

Սմիթ՝ հին Ասորեստանի աւերակաց մէջ գտնուած սեպաձև արձանագրութիւններէն նոր քանի մը հատուած կարդալով Լոնտրայի թանգարանին մէջ, ջրհեղեղը Ս. Գրոց մէջ պատմուածէն իբրև 12 դար առաջ հանդիպած երևոյթ։ Անգղիացւոց համար մեծ հետաքրքրութեան նիւթ. ուսումնականաց մէջ ալ բաւական շարժումն պատճառեց, այլ անտոյգ և անընդունելի դատուեցաւ։ Ի Ջանզիպար գերեվաճառութեան վերջին հարուածը տրուեցաւ։ Ուսումնականաց ժողով մը կազմուեցաւ և ղրկուեցաւ 'ի շրջագնացութիւն աշխարհի, 'ի հետազօտութիւն երևութից կենաց անդրքան զովկիան։ Լիվինկսդըն՝ կորուսեալ համարեալն, յերևան ելաւ։ Գիտնոց գումարտակ մ'ալ ղրկուած է յԱփրիկէ՝ Գոնկոյի աղբիւրն ու ընթացքը ճշդելու համար։ Ազգային ուղևորութիւն մ'ալ դէպ 'ի Հիւսիսային բևեռն ընելու ճիգն և վէճ կայ ժողովարանին մէջ։

Ինչպէս կը տեսնենք՝ 1872 տարին անշահ չանցաւ յԱնգղիա, որչափ ալ թէպէտ տխրութիւն պատճառեց Դրամասեղանոյն տոկոսաց վճարումը սաստիկ վար զարնելը, թոշակաւորաց ամենայն դասուց ժամավաճառութիւնը, և երկաթի և ածղի գնոց բարձրանալը։—Պիւլվէր՝ քաջ վիպասանն, մեռաւ։

Ոչ նոյնպէս բարեբաղդ եղաւ իրեն մերձաւոր Գաղղիան. ոչ յանցանաք ազգին՝ այլ զանազան կուսակցութեանց հերձուածովք։ Հասարակաց իրք յաջաջեցան խնայողութեամբ՝ երկրին մեծ կենդանութեանը պատճառաւ։ Մեծագումար փոխառութիւն մը դաշնադրուեցաւ, որով արդէն վճարուած է Գերմանիոյ 'ի հատուցումն երեք միլիար, և չորրորդ միլիարն ալ պատրաստ է. չորս նահանգէ ալ գերմանական գունդք ետ քաշուեցան։ Խաղաղութեան յաւելուածոյ դաշնագրութիւն մը կնքուեցաւ Գաղղիոյ երկրէն Գերմանացւոց բովանդակապէս ելլելուն համար։ Բանակը նոր դրութեամբ կանոնաւորուեցաւ՝ փոքր 'ի շատէ բրուսիական ոճով. 450,000 պատրաստ զօրաց բանակ կայ. Տէրութեան պաշտօնակալք վերահաստատուեցան՝ ընտրեալք կէս մը ժողովարանէն և կէս մը 'ի կամաց Թիէրի։ Ճարտարագործութիւնք և վաճառականութիւն ամենամեծ շարժումն ունեցան. սակայն տուրք կրկնապատկեցան. կուսակցութիւնք յամառ հակառակութեամբ միշտ կանգուն կեցան. վարչութիւնը դեռ 'ի վէրսայլ է. Բարիզ և Լիոն զինուորական դատաստանաւ կը դատուին. 'ի Սադորի Հասարակորդք (comunisti) հրացան հարուածովք կը սպաննուին. տպագրութիւնը ճնշուած է. պահպանադրութիւնը գործադրելու ջանք կ'ըլլայ, և բոլոր Եւրոպիոյ նոյն կերպն ընդունելի ընել տալ կը մտածուի, վաճառականական եղած դաշնադրութիւններն ոչնչացնելով. անդրագոյն կամ ծայրայեղ (ultramontana) սեպուած կուսակցութիւնը մեծ ազդեցութիւն ունի վարչութեան վրայ. շատ պանդխտական ուխտագնացութիւնք կ'ըլլուին յայլևայլ ուխտատեղիներ։ Գաղղիա տակաւին չըստացաւ Եւրոպիոյ վարիչ ըլլալու կարողութիւնը. ժողովականք ու նախագահը երկու այլազան կրկիսի մէջ են, վարչութիւնը կը շփոթեն, կ'անպատուեն ատենախօսական ոճը և տէրութիւնը կ'աղմկեն։

Թիէր վարչութեան գործէն ետ քաշուելու սպառնալիքը դադրեցուց, բայց ժողովարանը չուզեր լուծուիլ, բռնու-

թեան յաջորդեցին փոփոխակի կասկածանք և դաղտնի նենգաւորութիւնք. աշակողմը միապետութեան հաստատուելուն ջանք կ'ընէ. թիւերը չի յաջողիր կամ չուզեր ըստ ամենայնի հասարակապետութիւն հաստատել։ Կամպէդդայի պատճառած յուզմունքը ճառախօսութեամբք 'ի նահանգս՝ չհանրացաւ. Ռուէրի ժողովարանի անդամակցիլը Պոնաբարդեանց կուսակցութիւնը շատ չզօրացուց, որք կարծուածին ալ չափ անզօր չեն։ Օռլէանեան աղգատոհմն՝ որ զօրացեր էր Օրինականաց հետ ձուլուելու հակառակելով, անձնասպան եղաւ երեսուն միլիոն հատուցումն ընդունելով ստացուածոց համար՝ որ տարակուսանաք հայրենական կը համարուին, և զորս յալքունիս գրաւած և ծախած էր Նաբոլէոն Գ։ Ժողովարանին ձախակողմեան մասը տկարացած է ահեկակեդրոնին լուծմամբը՝ Լը–Ֆլրան պաշտօնականին ստիպեալ յետս նահանջելովը։ Զօրավարն Դրոշիւ մեկուսացեալ է յաշխարհատեսական կենաց, և Պազէն՝ կալանաւորեալն՝ դատուելու մօտ է, զՄէց անձնատուր ընելուն համար։ Հասարակաց կարծիքն ըստ բաւականի հասարակապետութեան զօրանալը կը ցուցընէ. ստոյգը նոր երեսփոխանաց ընտրութեան ժամանակ պիտի տեսնենք։

Անցագրոց անճահ դրութիւնը միայն իտալական սահմանագլխոյ վրայ դեռ կը բանի. Թիէրի ատելութիւնն ընդդէմ Իտալիոյ պատրուակեալ է ըստ կարելւոյն, վաճառականութեան դաշնադրութիւնը բարեկերպելու, և եթէ հնար է Իտալիոյ բերուին առ Գերմանիա խափանելու համար։ Նաբոլէոն իշխանը շատերու նման՝ արտասահմանեցաւ 'ի Գաղղիոյ. և այս հակառակ է ամենայն օրինաց, իշխանին գաղղիացի ըլլալովը։ Հասարակաց բարոյականը չի բարելաւնար, և մտաւորական զարգացումը կը տուժէ։ Լիդրէ աւարտեց մեծաստուար և անկրօն բառագիրքը. գայթակղական իրք անպակաս են. ընկերութիւնն'ի քայքայման է, և քիչ են բարոյական տարերք բարենորոգութեան։

Նոյն ախտանիշքը նոյն պատճառներով երևցան Պելճիոյ մէջ, և զգալի կենսական անկածութիւն տեսնուեցաւ 'ի Պելճիա անցեալ տարուան ընթացքին մէջ։

Հոլանտա կը յառաջադիմէ. ուր թէպէտ ուղղափառութիւնը մեծապէս կը զարգանայ՝ սակայն խառնազգայնոց հանրաժողովն ալ դժբաղդաբար հոն գումարեցաւ. Գերմանիոյ կողմ հակամէտ կուսակցութիւնը զօրագոյն է, թէ և ընկլուզման վախն 'ի Գերմանիոյ անցած չէ։

Գերմանիոյ վրայ մտածելով՝ միտք կը կազդուրին. ուր հանրազգային բնակինք ունեցող երկու մեծ դէպք կատարուեցաւ. Ումպերդոյ իշխանին այցելութիւնն 'ի Պեռլին, և երեք կայսերաց տեսաւորութիւնը։

Իտալիոյ թագաժառանգ իշխանն իր աղդին զգացման համաձայնող է, հօրմէն աւելի Գերմանիոյ կողմ հակամիտելով. Իտալիոյ ապագայն այս վարչութեան և շահուց հաւասարորդութենէ կախումն ունի։

Կայսերաց տեսաւորութեան դեռ հետևանք դործ մի ամենևին չեղաւ. Զարը միշտ սրտանց դաշնակից է Գերմանիոյ։ եթէ Աւստրիոյ կայսրը Փրանկ. Յովսէփ քինախնդրութեան ոգի ալ ունենայ՝ աւստրիա-ունգարացի ժողովուրդը Գերմանիոյ հետ խաղաղութիւն կ'ուզէ. պահպանասէր (conservativo) կուսակցութիւնն ընկճուած է, և Միւհլէր՝ այն կուսակցութեան դրօշակիրը, ստիպուեցաւ հրաժարելու։ Ուղղափառութիւնը ճնշուած է արտաքսմամբ Ցիսուսեանց, կրօնաւորաց և կրթիչ կուսանաց և դպրոցաց վրայ աշխարհականաց հսկելովը. նաև եպիսկոպոսունք իսկ ճնշուած են և ամբիոնք և եպիսկոպոսական կոնդակք խստու դիտելք. իսկ հին–ուղղափառ անուանեալքն մեծ

11030385

ընդունելութիւն գտած են, որոնք 'ի Գոլոնիա ժողովք կազմեցին, յորմէ անշահ եղան և ձեռաեցին ինքնին իրենց տարածմանը։ Ի Պավիէրա կրօնասէր պաշտօնակալաց դասը չկրցաւ իշխանութեան մէջ մնալ։ Գործաւորաց կողմանէ շատ պարապորդութիւն և ժամավաճառութիւն՝ այլ և ոչ մի խառնակութիւն։ Գաղթիլն յԱմերիկա աւելցած է։ Ալսաս և Լորէն որոշակի գերմանական նահանգ եղած են, յորոց զանազան ընտանիք 'ի Գաղղիա գաղթեցան, այլ թուով գաղղիական լրագրաց պատմածէն շատ նուազ։ Մեծամեծ վերանորոգութիւնք պատրաստեալք՝ կրօնականք, քաղաքականք և վարչականք. մեծ գործունեայ շարժումն ազգային զարգացման նկատմամբ։

Պիզմարք խորհրդարանի նախագահութենէն ետ քաշուեցաւ. ազգային միաւորութիւնն արդէն յառաջացեալ և լրման մօտ է, ամենայն գերմ. տէրութեանց ինքնիշխանութենէ հրաժարելոցն և Բրուսիոյ ալ ինքնատիրութենէ (egemonia)։ Վարչական վերաբերութիւնք Վատիկանու հետընդհատեալ են. Հոհէնլոհէ ծիրանաւորին իբրև դեսպան չընդունուիլն՝ արդէն այնմ մեծապէս առիթ եղեր էր. բովանդակ Գերմանիոյ մէջ եռացումն կայ ազատական վերանորոգութեան. ընկերական խնդիրք խոկման և ուսման նիւթ են։ Մոլդքէ սկսած է 1870–71ի պատերազմին պատմութեան հրատարակութիւնը. բանակը լաւագոյն կարգաւորուեցաւ ըստ փորձոյ վերջին պատերազմին։

Գերմանիոյ մտաւորական զարգացումն ալ դանդաղեալ չէ. ըստ ամենայնի կենդանութիւն կայ այս ծաղրախոհ, տրամաբան և կորովամիտ ազգին մէջ։ Թագաւորն որ իշխան է և վարիչ՝ կշիռն ամուր բռնած է ընդ մէջ ազատասիրաց՝ որ մէկ շնչով ամենայն ինչ կը փափաքին փոխել, և ընդ մէջ այնց որ յանշարժութիւն կը մտաբերին. իբրև թագաւոր Բրուսիոյ և խորհրդարանի իսկական նախագահ՝ Գուլիէլմոս պահպանասէր և նոյնապահ է և Տը Ռօնի հետ է. իբրև Գերմանիոյ կայսր՝ վերանորոգիչ է և յեղափոխիչ և կամակից Պիզմարքի։

Շուեդի մէջ մեռաւ Կարոլոս ԺԵ. թագաւոր ազատասէր, կարող, փառասէր և ուսումնական. հիմա կը թագաւորէ Օսկար Բ. իր եղբայրը։

Նաև Աւստրիոյ մէջ մեծ զարգացումն տեսնուեցաւ. 'ի Պոհեմիա Չէհ կուսակցութեան կարողութիւնը փճացաւ. լեհ կուսակցութիւնը մեծապէս խաբուեցաւ ինքնիշխանութեան յուսով Կալլիցիոյ մէջ։ Ունգարիա կը յառաջանայ, այլ ոչ առանց արգելից, որում 'ի շնորհս բարձան Զինուորական սահմանագլուխք և խառնաթաց արտօնութիւնք։ Ստորին Աւստրիոյ և Դիրոլի ուղղափառ աւագորեարն (dieta) 'ի յուզման են. բայց կեդրոնական վարչութիւնը նոր պաշտօնակալով զօրանալու վրայ է։ Առ կայսրութեան ժողովրանն ուղղեալ ընտրութեանց վերաբերեալ օրէնքն առաջարկուեցաւ։ Բանակն 'ի կարգի է և ըստ ամենայնի խնամեալ։ Մուտքն աւելնալու վրայ է։ Ունդարիոյ իրաւունքն ըստ բոլորին սահմանուած ընդունուած է, և Մաճառ անձնապետութեան կուսակցութիւնն յանկման է։ Իբրև անդրագոյն կամ ծայրայեղ համարեալ ուղղափառ կուսակցութիւնը զօրաւոր է յարքունիս, և ազդեցութիւն ունի տէրութեան վրայ, բայց ոչ նախիշխանաբար։

Ունդարիա պաշտօնական երկունքն (crisi) աշխարհավարական երկունք չեղաւ. Աւստրիոյ աշխարհատեսութիւնը կը հայի արդ ոչ այնչափ յԱրևմուտս՝ ուստի արտասահմանեց զինքը Գերմանիա, այլ յելս արևու։ Հանդարտ չեն ոգիք Թուրքիոյ նկատմամբ — ուր է ապագայ վտանգ կամ մեծութիւն կայսրութեան, եթէ Ռուսիոյ հետ զարնուելով պատերազմաւ՝ որ անհրաժեշտ կը համարուի, կարենայ յաղթող ելլել։

Աւստրիոյ կայսրը Պեռլին ըրած այցելութեամբը հանդատութիւն ատացաւ՝

բայց ոչ յոյս իր արևելեան տեսութեանը նկատմամբ՝ կուսակից ունենալու զԳերմանիա. հաւատեց թէ Աւստրիոյ Գերմանիոյ մէջ գերիշխան ըլլալը յանկարելեաց սակի է։ Մեծամեծ պատրաստութիւնք տարուոյս մայիսի մէջ բացուելիք արուեստահանդիսին համար։ Վատիկանու հետ վերաբերութիւնք շատ աղէկ վիճակի մէջ են։ Երկդիմի ընթացք Իտալիոյ հետ՝ բայց աւելի վարչութեան կողմանէ քան 'ի ժողովրդոց։ Աճեցուն բարգաւաճանք։ Ցժգոհութիւնք 'ի Տալմացիա և 'ի Դիրոլ եթէ ոչ արմատախիլ են՝ այլ գոնեա ամոքեալ։ Դիտել ու սպասել մը կայ Ռուսիոյ ինչ ընելուն։— Իսկ ընդ հանուր կայսրութեանն որ վիճակը բարեալ է և ապահովեալ. բանակը քաջակիրթ. ծովային զօրութիւնն աւելցաւ նորանոր նաւերով, որովք Ադրիականին ու Ցոնիականին իշխանութիւնը կրնանք ըսել թէ ձեռքն է։

Մեծ և շատ մեծ զարգացումն նաև 'ի Ռուսիա ըստ ամենայն մասին, ուր անցեալ տարուոյն մէջ կատարուեցաւ Եւրոպիոյ վիճակագրական հանրաժողովը։ Բանակը վիթխարի՝ թէպէտ և ոչ միատարր, ըստ գերմանական ոճոյ կանոնաւորեալ է. ծովային զօրութեամբը մինչև Անգղիոյ իսկ մոռածութեան նիւթ կ'ըլլայ։ Մեծ զօրութիւն ունի 'ի Կ. Պոլիս Իկնադիէֆ դեսպանին ձեռքովը. այլ աւելի մտադրութիւնն Ասիոյ վրայ է, ուր կը յառաջէ, և միշտ աւելի ևս յառաջադիմելու կը պատրաստուի՝ մինչև 'ի սահմանագլուխս Հնդկաց, և թերևս անդր քան զսահմանս Չինաց։ Անցեալ տարուոյն մէջ զինուորական խուզարկութեանց վերաբերեալ արշաւաններ եղան. երկաթուղեաց շինութեան և գետային և գլխաւորապէս ռազմագիտական նաւարկութեանց մեծ զարգացումն։

Կայսերական ընտանեաց մէջ տարաձայնութիւն կայ. կայսրորդին Նիկոլայոսի ոգին ունի քան իր հօրը Ալեքսանդրի. Կոստանդին մեծ դուքսն Զարին հետ համաձայն է և մեծ գաղափարներ ունի բարգաւաճանաց, և թերևս յաջորդութեան կարգն—որ Ռուսիոյ մէջ անդրանկին հետ կապուած չէ—կրնայ իրեն վրայ դարձուիլ։

Զուիցցերիի մէջ մեծ շարժումն դաշնակցական վերանորոգութեան և եկեղեցական ըստ կամս ազատամտութիւնք։ Անցեալ տարուոյն մէջ մարզական (cantonale) քուէով վերանորոգութեան խորհուրդը չյաջողեցաւ. կրկին պիտի փորձուի։ Օրինադրութիւն՝ ժողովրդապետաց առժամանակեայ ընտրութեանն և 'ի ձայն ժողովրդեան ըլլալուն համար, հին եկեղեցւոյ ժամանակին պէս։ Ալրուածութիւն վատիկանու հետ։ Սկզբնաւորութիւն Ս. Գոդարտի Դրանէլիի։ Ջանք փոխելու զվարչութիւնն՝ որ աւելի մարզական է, աւելի կեդրոնական ընելու համար—մերձաւոր երեք մեծ ազգաց ստիպմամբ։

Դանուբեան իշխանութիւնք տարի տարուան վրայ կը պարզին ու կը համարձակին։ Սերվիա՝ ուր Միլանոյ իշխանն արդ երիցութեան հասակը մտաւ և վարչութեան գլուխ է, տեսչութիւնը երեսփոխանական իշխանութեան կը վերածուի, և Թուրքիոյ հետ հետզհետէ աւելի աւրուելու հետ է։

Իսկ այս վերջինս դարձեալ անցեալ տարուոյն մէջ փոխաւութիւն ըրաւ։ Ի Յաճկաստան ցաւալի են ատէպ պաշտօնակալաց և ոճոյ ընթացից փոփոխութիւնք, և մանաւանդ ազդեցութեամբ օտար դեսպանաց և ընտանի հնարագիտութեամբք։ Ըստ Եւրոպացւոց դատողութեան՝ մեծ բանակ առանց սպայից և զօրապետաց, մեծամեծ նաւեր՝ առանց նաւաստեաց։ Մեծ ջանք թագաւորութեան յաջորդութեան կարգը փոխելու, եղբայրականը՝ որդիական ընելու։ Գաղղիոյ ազդեցութիւնը տկարացեալ. բարուց սաստիկ ապականութիւն։

Եգիպտոս կը զարգանայ և օր ըստ օրէ եւրոպական յառաջադիմութեան փայլ կը ստանայ։ Ի խորս Ափրիկէոյ

զօրանալու և Ֆաճկաստանէ անկախ ըլլալու մեծ ճիգն ունի։

Ի Սպանիա 1872 տարին վատահամբաւեցաւ կարլոսեանց, հասարակապետականաց և հիմա ալփոնսեանց խառնակութիւններովն, և կրկին դաւաճանութեամբը ընդդէմ կենաց թագաւորին։ Ամէտէոյի ընդ մէջ երկրին ճանապարհորդելը գինքը չընտանեցուց ժողովրդեան, որչափ ալ ինքը ժողովրդական, ազատամիտ և վեհանձն երևցաւ։ Երեք անգամ պաշտօնակալաց փոփոխութիւնք. մէկ տարւոյ մէջ կըրկին անգամ լուծումն քորդէս ժողովարանին։ Որոշումն վերանորոգութեանց՝ այլ ոչինչ գործադրութիւն. ազատութիւն գերեաց 'ի Բորդոյ — Ռիքքոյ. այպանելի խստութիւն Քուպայի նկատմամբ՝ ուր վտարանչութիւնը կը շարունակուի, և թերևս յաղթական իսկ հանդիսանայ։ Թագաւորն առանց արմատոց է ազգին մէջ. ազատասէր կուսակցութիւնը նոր քորդէս ժողովով 'ի վարչութեան, այլ անհամաձայն ազգին մեծ մասին հետ։ Անհամաձայնութիւն վատիկանու հետ։ Հասարակաց նոր պարտք և տէրութեան անանկանալն մեծ վախ։ Ցարին ձախողապէս կնքուեցաւ և 1873ս պայծառ չիշողաց. Ամէտէոյ հաստատամիտ է ըստ չափոյ, Ծորիլլա սրտոտ է ու աներկիւղ։

ՑԱմերիկա՝ Կրանդ դարձեալ ընտրուեցաւ. իւր ախոյեանն Կրիլէ մեռաւ։ Զեղծումն ծայրայեղ։ Արուեստական և վաճառականական սոսկալի գողնք, այլ ամենամեծ զարգացումն. հասարակաց պարտքն գրեթէ 300 միլիոն պակսեցաւ անցեալ տարւոյն մէջ։ Հնդիկն Ժուարէզ՝ Մէքսիկոյի նախագահը մեռաւ, սակաւագիւտ քաջասրտութեամբ և ուժգնեղութեամբ մէկը։

Ճիսբոն միշտ աւելի ևս կ'եւրոպականայ։ Զինաստան ամեն տարի քիչ մ'աւելի կը կը բացուի 'ի գործ ճերմակ ցեղին. բիւրաւոր ու միլիոնաւոր աշխատաւորներ կը գրկէ 'ի Հնդկաստան և յԱմերիկա։

Այս է կրցկըտուր դամբանական անցեալոյ 1872 ամին։

1873 Յունուար 2։

ՈՒՄՊԷՐԴՈ ԻՇԽԱՆԻՆ

ԲՐՈՒՍԻՈՅ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՈՅՆ

ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ԸՐԱԾ ՊԱՐԳԵՒԸ

Գերմանիա և Իտալիա երկու կարող և մեծամեծ ազգեր, երկար դարերէ 'ի վեր բարոյապէս կամ նիւթապէս օտար ազգաց տակ ընկճեալ, վերջապէս թօթափեցին իրենց վրայ ծանրացած լուծերն և ձևացան առանձին ազգ և թագաւորութիւն։ Այս երկու ազգերն թերևս իրարու ձեռնտուութեամբ լուծերնին թօթափելնուն, կամ արդի աշխարհագիտութեան այդ կերպ պահանջելուն, մեծ համակրութիւն և սէր ունին իրարու վրայ, որ թէպէտ բաղում առթից մէջ տեսնուեր էր, բայց աւելի ևս ստուգուեցաւ երբ անցեալ տարի Բրուսիոյ թագաժառանգ իշխանին որդի մը ծնանելով, այս պատեհաւ հրաւիրեց Իտալիոյ թագաժառանգ իշխանն ունելու զերախայն յաւազանի մկրտութեան։ Ումպէրդո բնականաբար չէր կրնար մերժել այս հրաւէրքը, ուստի ընդունեցաւ և գնաց 'ի Պեռլին, ուր մեծ ընդունելութիւն գտաւ։ Այս հանդիսին առթիւ, 'ի նշան Իտալիոյ առ Գերմանիա ունեցած մեծ համակրութեանը, Ումպէրդո գերազանց պարգև մ'ըրաւ իշխանուհւոյն, որ կը բաղկանայ պսակէ մը, գինդերէ, մանեակէ, և գժուարագիւտ ճարմանդէ մը։ — Պսակը կարկեհան քարերով և ուրիշ զարդերով զարդարուած է. գինտերն զարմանալի են մեծագին տանձաձև ակունքներովն. իսկ մանեակը կը ձևանայ ոսկիէ փոքրիկ ամենագեղեցիկ շրջանակներէ, որ ստէպ կ'ընդհատին կարկեհանէ վարդիկնե-